

ՄԱՐԻԱՄ ՌԵՎԱԶՅԱՆ

(ԵՊՀ)

ՎՐԱՅԵՐԵՆԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՎՐԱՅ ՄՈՒՀԱԶԻՐՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Պատմական տարբեր ժամանակահատվածներում Հարավային Կովկաս են ներխուժել նվաճողներ, որոնք հաստատվելով նոր տարածքներում, ձգտել են ձուլել տեղի բնակիչներին, այդ թվում և վրացիներին: Այդ քաղաքականության հիմնական մեթոդներից է եղել բռնի կրոնափոխումը՝ իսլամացումը: Դեպքերի համադրությունը ցույց է տալիս, որ Օսմանյան կայսրությունում վրացիների իսլամացման գործընթացը բավական հետաքրքրական ուղով է զարգացել՝ արտահայտվելով 2 հիմնական մակարդակներում: Նախ, Օսմանյան կայսրության՝ վրացիների բռնի կրոնափոխման առաջին մակարդակում տեղի էր ունենում վրաց վերնախավի կամովին իսլամացումը¹: Ինչ վերաբերում է երկրորդ մակարդակին, ապա նշենք, որ այդ փուլը կապված էր իսլամացած վրաց պաշտոնյաների ձեռքով հասարակ ժողովրդի ինտենսիվ բռնի կրոնափոխման հետ, ինչի հետևանքով հասարակության ցածր շերտերում քրիստոնեական հավատքը թուլանում էր, տարածում էին գտնում իսլամական սովորությունները²:

Ընդհանուր առմամբ Օսմանյան կայսրությունում վրացիների՝ վերոնշյալ 2 մակարդակով բնորոշվող ուժացման քաղաքականության ժամանակագրությունը, որի սկզբնավորումը պատմագրության մեջ պայմանականորեն ընդունված է համարել 1578 թ.³ Սամցխե-Սաաթաբագոյի նվաճման տարեթիվը, բաժանվում է 3 հիմնական փուլերի.

Առաջին փուլն ընդգրկում է 16-17-րդ դարերը: Այս շրջանում վերոնշյալ քաղաքականությունը գործի է դրվել հիմնականում ռազմական և ժողովրդագրական նկատառումներով:

¹ Gül M., Türk-Gürcü ilişkileri ve Türkiye Gürcüleri, SAÜ Fen Edebiyat Dergisi 2009, Cilt 11, sayı 1, s. 85-86, http://www.fed.sakarya.edu.tr/arsiv/yayinlenmis_dergiler/2009_1/2009-I-M-6.pdf, (30.09.2019).

² Романовский В., Очерки из истории Грузии, Тифлис, 1902, с. 127.

Երկրորդ փուլը վերաբերում է 18-րդ դարից մինչև 19-րդ դարի սկզբին: Սա մի ժամանակաշրջան էր, երբ Օսմանյան կայսրությունը ձեռք էր բերել մի նոր հզոր ախոյան՝ Ռուսաստանին, որը ձգտում էր գրավել իր քաղաքական հետաքրքրությունների կենտրոնում հայտնված Հարավային Կովկասը, այդ թվում նաև Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող վրացաբնակ հողերը: Այդտեղի քրիստոնյաներին թուրքերը, դիտարկելով որպես Ռուսաստանի պոտենցիալ դաշնակիցներ, բռնի իսլամացման են ենթարկել³:

Երրորդ փուլն ընդգրկում է 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի կեսերը: Այն հիմնականում կապված էր Օսմանյան կայսրությունում մուսուլման վրացիների վերջնական ուժացման քաղաքականության հետ, որը խարսխվում էր թուրքիզմի գաղափարախոսության վրա⁴:

Վերը նշված վերջին փուլում է սկսվել իսլամացած վրացիների մի մասի՝ Մուհաջիր վրացիների⁵ (արաբ. թարգմ.՝ գաղթական) գաղթը: Ավելին նկատենք, որ այն սկիզբ է առել դեռևս 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, որը սակայն էական ծավալներ չի ընդգրկել: Այս երևույթը լայն մասշտաբներ է ընդունել մասնավորապես 1877-1878 թթ. ռուս-թուրքական հերթական պատերազմից հետո, երբ Բեռլինի կոնֆերանսի որոշմամբ Ռուսաստանի տիրապետության տակ անցած նախկին օսմանահպատակ տարածքների բնակիչներին, այդ թվում և մուսուլման վրացիներին իրավունք տրվեց

³ Вачнадзе М., Гурули В., Бахтадзе М., История Грузии (с древнейших времен до наших дней), http://www.gumer.info/bibliotek_Buks/History/Vachn/index.php, (30.09.2019).

⁴ Ալեքսանյան Լ., Զվենբուրիները (իսլամացած վրացիներ) Թուրքիայում. պատմություն, արդի իրավիճակ, Արևելագիտության հարցեր, հ. 9, Երևան, 2015, էջ 172-174:

⁵ Նշենք, որ «Մուհաջիր վրացի» (վրաց. «Մուհաջիրի Քարթվելի») տերմինը վրացերենի և ընդհանրապես վրաց պատմագրության մեջ մուտք գործեց 19-րդ դարի վերջին քառորդում ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Օսմանյան կայսրություն գաղթած մուսուլման վրացիներին տարբերակելու նպատակով:

կամ ընդունել ռուսական տիրապետությունը, կամ տեղափոխվել Օսմանյան կայսրություն: Սակայն այս գործընթացը շարունակվեց հետագա տարիներին ևս՝ ընդհուպ մինչև 1921 թ.: Գաղթական վրացիները սկսեցին հիմնականում բնակություն հաստատել Թուրքիայի հյուսիսարևելյան հատվածում:

Օսմանյան կայսրությունն աջարաբնակ մուսուլման վրացիների նկատմամբ որդեգրեց ձուլման քաղաքականություն, որը նոր թափ ստացավ արդեն հանրապետական Թուրքիայում: Դրան նպաստող հանգամանք հանդիսացավ նաև Վրաստանի խորհրդայնացումը, ինչի արդյունքում մուհաջիրների և քրիստոնյա, ինչպես նաև աջարաբնակ մուսուլման վրացիների միջև կապը լիովին կտրվեց: Թուրքիան վրացիների այդ հատվածի թուրքացման գործընթացը գրեթե հասցրել է իր ավարտական փուլին: Դրա վառ վկայություններից է այն, որ Թուրքիայում բնակվող վրացի մուհաջիրների շրջանում վրացերենն աստիճանաբար մոռացության է մատնվում:

Հոդվածում, վրաց հետազոտողների ուսումնասիրությունների հիման վրա, կներկայացվի ժամանակակից Թուրքիայում բնակվող վրաց մուհաջիրների շրջանում՝ ինքնության պահպանման գլխավոր տար հանդիսացող «վրացերեն լեզվի» իմացության կարգավիճակը:

Ըստ վրաց ազգագրագետների հետազոտությունների՝ Թուրքիայում ապրող վրացիներին անվանում են «չվենեբուրի» (ჩვენებური), «թեելի չվենեբուրիներ» (თეელიჩვენებური), «ցուրջի» (გურჯი-վրացի)⁶, այսպես են անվանում Գուրջիստանից (Վրաստանից) եկածներին: Վրաց ազգի այդ հատվածը ևս սկսեց իրեն անվանել Չվենեբուրի (վրաց. թարգմ.՝ «Մերոնք», «Մեզնից»)՝ այդ կերպ պատենշվելով թե՛ մուսուլման վրացիների մյուս հատվածից և թե՛ քրիստոնյա իր եղբայրներից: Այսպես են նրանց անվանում նաև այլ ազգերի ներկայացուցիչները՝ թուրքերը, աբխազները, չերքեզները և ուրիշները: Թուրքաբնակ վրացիների շրջանում կատարված հետազոտությունների արդյունքների համաձայն՝ «վրացիների կարծիքով, եթե դուք գուրջի (վրացի) եք

⁶ ფაღავა მ., „მუჰაჯრთა შთამომავლებთან“, Զատում, 2016, გვ.32.

պետք է փաստել, իսկ եթե դուք ժխտում եք, ապա դուք մարդ չեք (նկատի ունեն դավաճանությունը.- Ռ.Մ.): Գուրջիները համարում են, որ գուրջոբան (վրացականությունը) ամենաազնիվ հասկացությունն է. «Եթե մեր երեխան ասի, որ գուրջի չի, նրանից կիրաժարվենք»⁷:

Բացի այդ, գյուղերում ապրող վրացիներն իրենց կարգավիճակը բնութագրելու համար օգտագործում են հետևյալ արտահայտությունները. «ես գուրջիի արյունակից եմ», «մեր արյունակիցն է»⁸: Վրացիներից շատերը նաև մատնանշում են, որ թուրքերը նրանց անվանում են «ցավուր»՝ անկախ իրենց մուսուլմաններից, քանի որ դա նշանակում է ոչ մուսուլման: Թուրքերը զայրույթի ժամանակ կիրառում էին «քարթվելիշվիլ» (ქართველიშვილი վրացი ვაჟი)⁹ արտահայտությունը, որն իհարկե ցույց էր տալիս նաև բացասական վերաբերմունք: Խոսքը վերաբերում է Թուրքիայում ապրող քրիստոնյա վրացիներին: Վրացի ազգագրագետների հարցումների ընթացքում հարցվածները նշել են, որ մուսուլմանների համար ոչ մուսուլմաններն անընդունելի են, նշելով, թե «մեր մեծերն ասում են. այստեղ վրացիներին ցավուր են ասում, ցավուր վրացիներից բողոքում են»¹⁰:

Ավելի ուշ, սկսեցին օգտագործել վրացի էթնանունը և հետևաբար հայտնվեցին նոր անվանումներ՝ «քարթվելի» (ქართველი - վրացի), «գաճուրուլի քարթվելի» (გაწურული ქართველი), «սուփթա քարթվելի (სუფთა ქართველი)»¹¹: Ինչպես Թուրքիայի վրացիների շրջանում, այնպես էլ պատմական Վրաստանի հարավային նահանգներում և ներքին նահանգներում ապրող մուսուլմանների ժառանգների շրջանում ավելի հաճախ է կիրառվում «Գյուրջի» արտահայ-

⁷ Գալաշվիլի մ., „მუჰაჯრთა შთამომავლებთან“, ბათუმი, 2016, გვ.32.

⁸ Նույն տեղում:

⁹ Գալաշվիլի մ., „მუჰაჯრთა შთამომავლებთან“, ბათუმი, 2016, გვ.32.

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Լუტიძე ი., თურქეთის მუჰაჯირი ქართველები (ეთნო-ლინგვისტური მიმოხილვა), თსუ-ს საქართველოს ისტორიის ინსტიტუტის შრომები სპეციალური გამოშვება „კლარჯეთის დიდებულთა უდაბნოთა“, თბილისი, 2012, გვ.32.

քարթուլა//քარթվელირა)¹⁵: Բայց ի տարբերություն մյուս տերմինների, չվենեբուրի տերմինն ավելի հաճախ է օգտագործվում: Այս տերմինի կիրառմամբ նրանք տարբերվում են Թուրքիայում ապրող այլ էթոսներից: Էթնիկ վրացիների համար էթնիկությունն այն հիմքն է, որը հիմնված է ինքնության վրա, և լեզուն ինքնությունն արտահայտելու հիմնական միջոցն է: Այդ մասին է վկայում նաև վրաց ազգագրագետ Ի. Ղուտիձեն, նշելով, որ դարեր շարունակ էթնիկ վրացիները պահպանել են վրացերեն լեզուն որպես էթնոմշակութային տեղեկատվության աղբյուր:

Մուհաջիրների ժառանգների շրջանում ազգագրագետների անցկացված հետազոտությունները ցույց են տվել, որ ըստ մուհաջիրների ժառանգների՝ «գյուրջին նա է, ով գիտի վրացերեն լեզու, իսկ վրացերեն լեզու չիմանալը հավասարազոր է նրան, որ տվյալ անհատը հրաժարվում է վրացի լինելուց»¹⁶: Հարցվածները նշել են, որ «Ես գյուրջի (վրացի) եմ, իմ երեխան գյուրջի չէ»¹⁷, ինչը վկայում է, որ երեխան վրացերեն չգիտի: Այլ կերպ ասած՝ «գյուրջիները» նրանք են, ովքեր խոսում են վրացերեն, գիտեն վրացերեն և իրենց վրացական ծագումը: Ցավոք, այսօրվա սերունդը գնալով մոռանում է իր լեզուն և ծագումը. «Մենք որոշ ժամանակ անց այլևս գյուրջի չենք լինի, վրացերեն չենք խոսա, լեզուն չենք իմանա»¹⁸: Զիֆլիքքոյ (Çiftlikköy) գյուղի բնակիչ Բեիթուլա Մակարաձեն հաստատում է, որ իրենց գլխավոր խնդիրներից մեկն այն է, որ տեղացիները մաքուր վրացերեն չգիտեն. «Տեղացիների լեզուն տաս տարով հին է, ձեր լեզուն նոր է: Երիտասարդները չգիտեն իրենց նախնիների լեզուն, չգիտեն չվենեբուրիների բարբառը... Մենք, որ մահանանք, այստեղ վրացականը կվերանա»¹⁸: Այս հարցումների արդյունքները վկայում են, որ Թուրքիայի վրաց մուհաջիրների շրջանում նկատվում են ազ-

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Գալաձա մ., չարտեցელი մუշափորები օրდուսა და სამსუნის გუბერნიებში (ილებში), ბათუმის შოთა რუსთაველის სახელმწიფო უნივერსიტეტის ქართველოლოგიის ინსტიტუტის კრებული, VII, ბათუმი, 2013, გვ.15.

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Գալաձա մ., „მუშაჯრთა შთამომავლებთან“, ბათუმი, 2016, გვ. 413, 428.

գային զարթոնքի միտումներ, այնուհանդերձ, վրացերենի կրողներն օրեցօր նվազում են:

Տվյալ գործոնների հետ մեկտեղ լեզուն դեռ կենդանի է, քանի դեռ մարդկանց հիշողության մեջ պահպանվում է տեղանունների վրացերեն տարբերակը: Թեև այսօր տեղանունները պաշտոնապես թուրքերեն անվանումներ ունեն, սակայն Թուրքիայի սևծովյան տարածաշրջանի ինչպես վրացական գյուղերում, այնպես էլ երկրի այլ շրջաններում հաճախ կիրառվում են վրացական ծագման տեղանուններ. օրինակ՝ Զեմոկղանա (Ֆեմոցանա), Միփլնարի (Միֆլնարի), Բարդնալի (Զարդնալի), Քերիելի (Չերոելի, Չերոյերի), Զուլ Բախչա (Ջոլո Զախչա)¹⁹: Տեղանուններում պահպանվող լեզուն էթնիկ խմբերի և մշակութային ժառանգության պահպանման եղանակներից մեկն է: Լեզվի պահպանմանը մեծապես նպաստել է քաղաքային կենտրոններից դուրս՝ գյուղական բնակավայրերում միասնական բնակվելը: Միասին բնակեցված խմբերն ավելի լավ են պահպանում լեզուն, քան տարբեր տեղերում ցրված խմբերը:

Վրացի պրոֆեսոր Մալխաս Չոխարիձեն իր հետազոտությունների արդյունքում Թուրքիայում բնակվող վրացի մուսուլմաններին մի քանի խմբի է բաժանում՝ ըստ ծագման և վրացերեն լեզվի իմացության.

I. Գիտեն վրացերեն, սեփական ինքնությունը տարբերում են Թուրքիայում ապրող այլ ազգություններից: Իրենց համար կարևոր արժեք ունի վրացական ծագումը և իրենց հպարտության հիմքն է:

II. Գիտեն վրացերեն և դրա շնորհիվ վրացիները բաժանվում են այլ ազգերի ներկայացուցիչներից, բայց որպես «հավատարիմ ենթականների» իրենց համարում են թուրքեր: Վրացական ծագումը նրանց համար նշանակալի արժեք ունի:

III. Գիտեն վրացերեն, իրենց համարում են գյուրջի, բայց երբեմն համարում են, որ ունեն թուրքական ծագում:

¹⁹ Գալաշվա մ., „მოკვჩრთა შთამომავლებთან“, Զաթումი, 2016, გვ. 106.

IV. Չգիտեն վրացերեն, բայց գիտեն, որ ունեն վրացական ծագում, բայց իրենց համարում են թուրքեր:

V. Չգիտեն վրացերեն, նաև վրացական ծագման մասին, բայց այնուամենայնիվ պետք է նշել, որ երբեմն ունեցել են վրացի նախնիներ: Այդ հավանականությունը նրանց համար նշանակություն չունի, քանի որ իրենց համարում են թուրք:

VI. Չգիտեն վրացերեն և իրենց վրացական ծագման մասին, իրենց համարում են թուրք²⁰:

Իսկ վրացի պրոֆեսոր Ինգա Ղուտիձեն Թուրքիայում բնակվող էթնիկ վրացիներին երեք խմբի է բաժանում.

I. Էթնիկ վրացիներ, ովքեր միշտ ընդգծում են իրենց վրացական ծագումն ու լեզուն, որը նրանց համար ամենակարևորն ու հարգատն է:

II. Էթնիկ վրացիներ, որոնց համար ամենակարևորը հանդիսանում է կրոնը, բայց բոլորն էլ նշում են, որ վրացի են:

III. Վրացիներ, ովքեր ձուլման են ենթարկվել թուրքերի կողմից և նրանց համար նշանակություն չունի թե ինչ ծագում ունեն²¹:

Իսկ ըստ վրացերենի իմացության բաժանում է հետևյալ խմբերի.

I. 80 տարեկան վերաբնակեցված կանայք (նրանց թիվը մեծ չէ), ովքեր վատ գիտեն թուրքերեն և հիմնականում խոսում են վրացերեն լեզվով: Այս կանայք հիմնականում տանն են աշխատել և չեն մասնակցել հասարակական կյանքին: Այս միտումը այսօր շատ թեքիչ շարունակվում է: Գյուրջի կանանց գործունեությունը Թուրքիայի տարբեր շրջաններում սահմանափակվում է տնային տնտեսուհու աշխատանքով: Վերոնշյալ մարդկանց համար վրացերեն լեզուն ուղղակի և փոխաբերական մայրենի լեզուն է:

II. 60-75 տարեկան էթնիկ վրացիներ, ովքեր ապրում են գյուղերում, հիմնականում խոսում են վրացերեն: Ցանկացած վայրում իրենց հաղորդակցման լեզուն հանդիսանում է վրացերենը, իսկ թուր-

²⁰ Բոնահաձե մ., չարտული յեոս ցեօցրաճիա տըրքեթոմի (մարմարիլոս Գևջոս րեցիօնո), Զաթոմի, 2016, ցց.41.

²¹ Լըժոժոյ օ., 2010, սեցց <https://iberia.wordpress.com/iberiana.ghutidze-muhajir/>

քերենն օգտագործվում է այն ժամանակ, երբ ունենում են փոխհարաբերություններ այլ ազգերի ներկայացուցիչների հետ կամ ներգրավում են հասարակական կյանքի ցանկացած ձևի մեջ: Նրանցից ոմանք ակնհայտ պատճառներով դպրոցում չեն ընդգրկվել:

III. 35-60 տարեկան էթնիկ վրացիներ, ովքեր կրթությունը թուրքերեն լեզվով են ստացել: Այս մասը նշում է, որ թուրքերեն սովորել է միայն դպրոցն ավարտելուց հետո, ինչը խնդիրներ է առաջացրել, և երբեմն երկու տարի մնացել են նույն դասարանում²²:

Ինչ վերաբերում է 35-ից ցածր էթնիկ վրացիներին, ապա նրանք բաժանվում են հետևյալ խմբերի

I. Խոսում են վրացերեն, և միմյանց հետ վրացերեն լեզվով հաղորդակցվելիս խնդիրներ չեն առաջանում:

II. Վատ են խոսում վրացերեն:

III. Հասկանում են վրացերեն, բայց չեն կարողանում խոսել:

IV. Չեն հասկանում և չեն խոսում վրացերեն :

V. Վրացերեն սովորում են 18 տարեկանը լրանալուց հետո:

Մյուս կողմից ներկա շրջանում կարող ես հազվադեպ հանդիպել նոր սերնդի ներկայացուցչի, ով կարող է իմանալ իր մայրենի լեզուն, իսկ երիտասարդ և փոքր տարիքի երեխաները այլևս չգիտեն վրացերեն:

19-րդ դարից հետո վրացերեն լեզուն հետևյալ փոփոխություններին է ենթարկվել.

I. Բառապաշարը դարձել է զգալի խոցելի:

II. Բառապաշարում մեծացել է թուրքերեն բառերի թիվը²³:

Այսպիսով՝ վրաց մուսաջիռների համար դարերի ընթացքում ինքնության պահպանման գլխավոր տարրերից մեկն եղել է լեզուն: Մակայն ժամանակի ընթացքում ժամանակակից միջավայրի, այլ ազգերի հետ հաղորդակցման և վրացերենի չօգտագործման պայմաններում լեզուն աստիճանաբար մոռացության է մատնվել: Վրացի

²² Լուծոթյ օ., 2010, ձեռք, <https://iberia.wordpress.com/iberiana.ghutidze-muhajir/>

²³ Քոնարաձե մ., Նամոսա և „ատորմեթ Նաճաճեթ“ մեհարոս ժեղո Տոճեղեճո, Զատում, 2015, թ.144.

ազգագրագետների գնահատմամբ՝ վրացախոսությունը մուհաջիրների շրջանում բավական ցածր մակարդակի վրա է գտնվում և կրում է լոկ ազգային նույնականացման սիմվոլիկ բնույթ: Այն առավել տարածված է գյուղերում, այն էլ՝ ավագ և միջին սերնդի ներկայացուցիչների մոտ: Ավելին՝ այն ձեռք է բերել «ընտանեկան լեզվի» կարգավիճակ: Այն գրական մակարդակի չէ և պրոֆեսոր Շուշանա Պուտկարաձեի վկայությամբ լեցուն է արաբապարսկական բազմաթիվ բառերով: Վրացախոսության անկմանը խթանող երևույթ է գյուղից քաղաք տեղաշարժը, ինչպես նաև այն հանգամանքը, որ կրթությունը թուրքերենով է: Սակայն պետք է արձանագրել, որ դարերի ընթացքում թուրքերի ձուլման քաղաքականության արդյունքում վրացի մուհաջիրները շատերը մոռացել են ոչ միայն իրենց լեզուն, այլև ծագումը, լիովին ինտեգրվել են թուրք հասարակությանը և իրենց համարում են թուրք:

**MARIAM REVAZIAN
(YSU)**

GEORGIAN LANGUAGE IN THE MEMORY OF DESCENDANTS OF TURKEY'S GEORGIAN MUHAJIRS

Recently in the researches of Georgian ethnographers and historians is given a big importance to the main element of maintaining identity within Georgian muhajirs', which is – the status of Georgian language knowledge. In general, speaking about the level of national identity within Georgians living in Turkey, it will be right to mention, that it has been maintained only because of some Caucasian traditions, habits and in form of Georgian dialect usage. According to some surveys Georgian-speaking is in a very low level within the former ones and has only a symbolic nature of national identification. It is more widely spread in the villages and as Georgian ethnographers state, it has acquired the status of “family language”.